

««Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈՂՎԱԾ 1. «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2019 թվականի նոյեմբերի 14-ի ՀՕ-252-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածը լրացնել 6-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Մարզպետի տեղակալը մարզի աշխարհագրային պայմանական գործադիր մարզի ղեկավարն (հրամանատարն) է: Մարզպետի տեղակալի կողմից մարզի աշխարհագրային պայմանական գործադիր մարզի ղեկավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով և աշխարհագրի պատրաստության ու կիրառման պլանների համաձայն:»:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 7-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7) ապահովում է մարզի համայնքների աշխարհագրային պայմանական բրիգադների և գումարտակների համալրումն աշխարհագրայիններով՝ մարզի տարածքում ըստ համայնքների հաշվառված քաղաքացիներից:»:

ՀՈՂՎԱԾ 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված կարգավորումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 օրացուցային օրվա ընթացքում: